

ՀԱՅ-ՖԻՆԱՆՍՈՒԳՐԱԿԱՆ ԼԵԶԿԱԿԱՆ
ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայերենի և ֆիննաուգրական լեզուների փոխառնությունների հարցը համեմատական լեզվաբանության մեջ քննարկման հարց է եղել այնքանով, որքանով որ քննարկման նյութ կարող էր լինել հնդեվրոպական և ֆիննաուգրական լեզվաընտանիքների փոխառնությունների հարցը, այսինքն՝ սոսկ նոստրատիկ լեզվաբանության համատեքստում: Ե՛վ Իլիչ-Սվիտիչը, և՛ Ա. Տրոմբետտին, և՛ Գ. Ջահուկյանը հայերենը համեմատել են այլ լեզվաընտանիքների, մասնավորապես ֆիննաուգրական լեզուների հետ այնքանով, որքանով որ այն հնդեվրոպական լեզու է՝ քննարկման նյութ դարձնելով հայերենի բառային այն շերտը, որի հնդեվրոպական լինելն իրենք ապացուցված են համարել: Ուսումնասիրությունից գրեթե դուրս են մնացել հայերենի չստուգաբանված կամ կասկածելի ստուգաբանություն ունեցող արմատները: Այնուամենայնիվ, բառային այդ շերտի քննությունը ցույց է տալիս, որ այն արժանի է լուրջ ուշադրության:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայ-ֆիննաուգրական ընդհանրությունները ժամանակագրային առումով բազմաշերտ են: Որոշ բառեր իրոք կարելի է նոստրատիկ շրջանին վերագրել: Սակայն ֆիննաուգրական լեզուներում կան բառեր, որոնք իրենց հնչյունական կազմով և նշանակությամբ հայերեն համարժեքներից քիչ կամ գրեթե չեն տարբերվում, օրինակ՝ հունգար. *lenni* - հայ. *լինել*, հունգար. - *hegy* - հայ. *այգի*, հունգար. *tör* - հայ. *թուր*, ֆիններեն *kirya* - հայ. *գիրք*, ֆինն. *hius* «մազ» - հայ. *հիւս*, ֆինն. *hipoa* - հայ. *հպվել*, ֆինն. *kidutus* - հայ. *կտտանք*, ֆինն. *synnynta* - հայ. *ծնունդ*, ֆինն. *kitsas*, էստոն. *kitsi* - հայ. *կծծի*, ֆինն. *takoa* «կոփել, խփել, թակել» - հայ. *թակ*, ֆինն. *vari* «տաք» - հայ. *վառ*, ֆինն. *päiliä* «փայլել» - հայ. *փայլ*, ֆինն. *tõno* «խրճիթ» - հայ. *տուն*, ֆինն. *kylki*, էստոն. *külg* «կողք» - հայ. *կողք*, էստոներեն *kirg* - հայ. *կիրք*, էստոն. *puit* - հայ. *փայտ*, էստոն. *küla* - հայ. *գիւղ*, մարիերեն *няемс* «տեսնել» - հայ. *նայել*, մարիերեն *поч* - հայ. *պոչ*, մարիերեն *уш* «միտք, հիշողություն» - հայ. *ուշ*, մարիերեն *түс* «տեսք, կերպարանք» - հայ. *տես*, մարիերեն *ыраш* «տաքանալ» - հայ. *այրել*, մարիերեն *тараш* «հեռացնել» - հայ. *տար*, մարիերեն *цыреан* «շառագույն, ծիրանագույն» - հայ. *ծիրանի*, մարիերեն *чыр* - հայ. *ժիր*, կոմի *пӧс*, ուղմուրտ. *пӧзь* «տաք, շոգ» - հայ. *րոգ*, կոմի *шыбитны* «չպրտել, դեն նետել» - հայ. *չպրտել*, կոմի *шыбитӧм* «նետում», կոմի *киль* - հայ. *կլեպ*, ուղմուրտերեն *шепертыны* «տարածել» - հայ. *չպրտել*, ուղմուրտ.

дырѣя – հայ. դեռ, երգյաներեն тукномс - հայ. թակել, երգյան. бахадемс «հարվածել» - հայ. բախել, երգյան. каподемс «բռնել»- հայ. կապոտել, երգյան. чермердемс – հայ. ծմրթել, երգյան. улезе «թող լինի» - հայ. եղիցի, և այլն :

Բառային այդ շերտին մենք արդեն անդրադարձել ենք՝ բոլոր օրինակներում ձգտելով խուսափել այնպիսի զուգաբանություններից, որոնք լրացուցիչ բացատրությունների կարիք ունեն։ Փորձել ենք նաև ուշադրություն բևեռել այն հանգամանքին, որ ֆիննաուգրական որոշ համարժեքներ քիչ են տարբերվում հայերենի նաև հնդեվրոպական համարվող արմատներից, այն դեպքում, երբ հ.-ե. նախածները երբեմն խիստ տարբեր են հայերեն արմատից¹։ Հայերեն *զին*, *զիր*, *զերան*, *հոգի*, *քսան*, *քանի* և բազմաթիվ այլ արմատների ֆիննաուգրական համարժեքները առնվազն ենթադրում են զուգահեռ—ծների գոյություն վաղնջական ժամանակներից, եթե նույնիսկ հ.-ե. նախածները միանգամայն արժանահավատ համարենք։

Ֆիննաուգրական լեզուների բառապաշարի համեմատական քննությունը ցույց է տալիս մի շարք հնչյունական անցումներ։ Դրանց մի մասը մենք կփորձենք ներկայացնել բառային այնպիսի օրինակներով, որոնք համեմատության որոշակի եզրեր ունեն հայերենի հետ։

1. *r > l* *հերթագայություն* 1. հունգար. *harmat*, մար. *pyh* «եղյամ», *lyim* «ծյուն», ֆինն. *huurre*, *harmä* «եղյամ», *halla* «սառնամանիք», *kylmä* «սառը», էստոն. *külm* «ցուրտ», *hall*, *härm* «եղյամ», կոմի *ёльк* «սառած», ուղմուրտ. *лымы* «ծյուն», երգյան. *кельмс* «սառնամանիք», մար. *кыламыш* «սառչել» խանտ. *kelä* «ցող» (= հայ. *եղեամն*), 2. մար. *вылаң* «վրա», կոմի *вылō* «վրա», ուղմուրտ. *выр* «բարձունք», *вылō* «բարձր», հունգար. *főle* «վրա» (= հայ. *վեր*), 3. հունգ. *elni* «ապրել», ֆինն. *elää* «ապրել», *elo*, *elämä* «կյանք», էստոն. *elama* «ապրել», մոկշան. *эряма* «կյանք», *эрямс* «ապրել» (= հայ. *եղ-*), 4. ֆինն. *kerä* «կծիկ, զունդ», *kiero* «ծուռ, թեք», *kela* «катушка» (= հայ. *կեռ*, *կոր*)։ 5. հունգար. *harom*, ֆինն. *kolme*, մանս. *хурум* «երեք» (= հայ. *երեք*)։

R > l *հերթագայության* բազմաթիվ օրինակներ կարելի է գտնել նաև հնդեվրոպական լեզուներում, օրինակ՝ 1. հայ. *ջեռ-* - հինդի *जलना* [*jalnā*], *जारन* [*jāran*] «այրում», *जरना*. *जाना* [*jānā*] «վառվել», լիտվ. *žėreti* «վառվել», *žara* «запоро», *šildīt* «տաքացնել», *dzirksts* «կայծ», ռուս. *жар*, 2. հայ. *ջուր* - հինդի *जल* [*jal*] «ջուր», լատիշ. *dzert* «խմել», *džēriens* «խմիչք», 3. հայ. *եղն-իկ* - ռուս. *олень, елень*, լիտվերեն *eine* «եզ եղջերու», գերման. *Hirsche* «եղջերու»,

¹ Գ.Լիկողոսյան, Հայերենը և ֆիննաուգրական լեզուները, Լեզու և լեզվաբանություն, № 2008, 2։

Elch «հյուսիս. եղջերու», անգլ. elk, reindeer «հյուսիս. եղջերու» (< հին անգլ. breindeer), իսլանդ. hjörtur «եղնիկ», հինդի हिरन [hīran] «եղջերու», 4. հայ. *գեղմն* - գերման. Garn «բուրդ», իսլանդ. garn «բուրդ», նորվեգ. garn «թել», անգլ. yarn (< հին անգլ. gearn) «բուրդ, թել», սանս. carman «մորթ, մորթի», օտերեն xīl/xelæ «մազ, մազեր», 5. հայ. մաղ-/ մալ-/ մուլ - ռուս. молоть «աղալ», молоток «մուրճ», маляр «փոքր», լիտվ. malti «աղալ», milti «ալյուր», հ. իսլանդ. mala «աղալ», անգլ. mill «աղաց», morsel «պատառ», օտերեն mūr/ moræ «փշրանք, կտոր», սանս. ար[mar] «փշրել, մամրել», սանս. mörati «փշրելով ծեծել, մամրել», mörna «մամրած, փշրած», 6. հայ. *եղեամն* – օտերեն xalas, kysr «եղյամ», լատին. gēlo, are «սառեցնել», gelū «սառնամանիք», շվեդ. rimma «եղյամով պատվել», անգլ. rime (< հին անգլ. hrime), իսլանդ. hela [je:la] «եղյամ», kala «սառչել», kæla «ցուրտ», գերման. Reif, 7. հայ. *մեռնել* – սանս. ար[mar] «մեռնել», ար[mar] «սպանել», օտերեն mælyn: mard «մեռնել», ռուս. умереть, լատին. mors, tis «մահ, սպանություն» իտալ. morire «մեռնել», morte «մահ», 8. հայ. *բաղձ* – օտերեն bælyn: bælyd «ցանկանալ», ավեստ. vara «ցանկություն», սանս. ար[vara] «ցանկություն», լատին. volo, elle, իտալ. volere «ցանկանալ», հ.բ.գ. wellan «ցանկանալ», անգլ. will «կամք», ռուս. воля, լիտվ. vale «ցանկություն», 9. հայ. *կուրծ/ կրծել* – օտերեն gærdyn, ռուս. гладать, 10. հայ. *բահ* (< *բարի*), օտերեն bel «բահ», քրդ. bāl, ber «բահ», 11. օտերեն ræjyn «հաչել» – ռուս. лаять, 12. հայ. *գոլ* – պարսկ. garm «տաք», ռուս. гореть, 13. հայ. *ջուր* – հինդի जल [jal] «ջուր», 14. հայ. *ողող, վարար* – սանս. ար[vār] «ջուր», օտերեն furd/ ford «ծով», անգլ. flood «հեղեղ», ռուս. влaga, 15. հայ. *երկին* – հին անգլ. welkin, լատին. caelum «երկինք», 16. հայ. *առու* – շվեդ. älv, նորվ. elva, անգլ. river, բուլղր. «գետ», իսլանդ. renne «հոսել», հուն. οὐρός «առու», 17. հայ. *այրել* – շվեդ. aril «հնգձ. օջախ», eld «կրակ, խարույկ», նորվ. are «վառարան», իսլանդ. arinn «օջախ», orna ser «տաքանալ», elda «վառել, բռնկվել», eldur «կրակ, հրդեհ», 18. հայ. *առիւծ* (< *առեւծ*) – լատին. leo, leōnis, իտալ. leone, լատիշ. lauva, լիտվ. raynis, ռուս. лев «առյուծ», 19. հայ. *այր* «քարայր» - իսլանդ. hellir, շվեդ. hälla, նորվ. hülle, լատիշ. ala «քարայր» 20. հայ. *աղուխ* – պիլ. ropas, հինդի lomri, շվեդ. rav, նորվ. rev, իսլանդ. rebbi, լատիշ. lapsa, լիտվ. lapė, ռուս. лиса, 21. հայ. *գալլ* – սանս. vrka, պարս. gurg, օտերեն wærg, wærx, բելուշ. gurk, քրդ. gur, իռլանդ. fael, շվեդ. varg, իսլանդ. vargur, գերմ. Wolf, անգլ. wolf, լիտվ. wilks, ռուս. волк «գայլ», 22. հայ. *լոյս* – սանս. rōka «լուսավոր», պահլ. rōc «օր», rošan «լուսավոր», հուն. λευκος «լուսավոր, սպիտակ», լատին. lux, հ.իսլանդ. lios, շվեդ. lius, գերմ. Licht, անգլ. light «լույս»,

ռուս. луг «ճառագայթ», 23. հայ. լուսան – լատին. lūnx «լուսան», լատիշ. lūsis, rikši «լուսան», ռուս. рысь, 24. հայ. գեղձ¹ – սանս. गार्ध [gard^ha] «ազահողթյուն», իսլանդ. gírnast «տենչալ», gírnđ «տենչ, կիրք», gjarna «հաճուրքով», գերմ. Gier(de) «տենչ», ծարավ», gieren «տենչալ», անգլ. yearn «տենչալ» (< h. անգլ. gearn), լատիշ. kārs «ազահ», ռուս. желать, 25. հայ. գեղձ² – հինդի गिलती [giliti] «գեղձ, ուռուցք», լատին. glans, glandis желудь, glandula, ae «պարանոցի գեղձ», շվեդ. körtel «անատ. գեղձ», լիտվ. geležė «գեղձ», ռուս. железа «գեղձ», օսերեն wæll/ wælae «վրա» – հայ. վեր:

2. m/n > 0, ընգայնացում > ընգայնացման կորուստ, այսպես կոչված քափառող ընգայնացում (блуждающая назализация):²

ֆինն. lintu «թռչուն», էստոն. lind «թռչուն», հունգար. lud, մար. лудо «բադ», խանտ. lunt «սագ», մանս. lunt «սագ»:

ֆինն. kynsi «եղունգ, ճիրան», մորդվին. кенже, մար. күчө, կոմի гыж, ուլմուրտ. гижа, խանտ. конч, մանս. кюнш, սաամ. газза:

ֆինն. henki «հոգի, մարդ, ոգի», հուսկ. «շնչառություն», էստոն. hing «հոգի», hingus «շունչ», հոնգ. hōngus «շնչառություն», մար. енг «մարդ», йанг «հոգի» - հայ. հոգի:

ֆինն. kimppu «խուրձ, կապ», էրզյան. коморо «բուռ, կապ», մոկշա капа «ղեզ» - հայ. կապ:

Այս օրինաչափությունը թույլ է տալիս հայերենի *խումբ* և *կապ* բառերը համարել միևնույն արմատից լծորդված:

Նույն օրինաչափությունը նկատվում է նաև հնդեվրոպական լեզուներում:

«Թափառող ընգայնացումն» ավելի հասկանալի կլինի, եթե հիշենք, որ հնդկական լեզուներում միևնույն արմատի տարբերակները կարող են ունենալ արմատի ընգային և ոչ ընգային ծայնավորներ, օրինակ՝ սանս. भुग्न [b^hugna] «ծուռ, ծոված», भोग [b^hoga] «թեքում», հինդի बाक [bak] «ծուռ, ծոված», बाकना [bāknā] «ծռվել», որի համարժեքները կան այլ հնդեվրոպական լեզուներում՝ շվեդ. bäge «աղեղ», «թեքվել», իսլանդ. bogi «աղեղ», գերմ. Bogen «աղեղ», անգլ. bow «աղեղ» (< h.անգլ. böga), ռուս. бгать - հայ. *բեկ*, նաև՝ *բակ*: Բացի այդ, միևնույն կերպ արտասանվող [hindī] «հինդի» բառն, օրինակ, հնդկերենում կարող է ունենալ գրության երկու ձև՝ हिन्दी[hindī], և हिंदी[hindī]:

² Юшманов Н.В. Этюды по общей фонетике на материале неиндоевропейских языков, ВЯ, 1989, № 5, с. 73.

Հնդեվրոպական լեզուներում գտնում ենք՝ 1.սանս. शत[ṣata], छट[chaṭa] «հարյուր, շատ», հինդի शत [ṣat], լատին. centum «հարյուր», լատիշ. simt, իսլանդ. hundrad, ռուս. сто, «հարյուր», պիլ. *ṣat, պրսկ. šad - հայ. շատ, 2. սանս. षष्ठ[ṣubḥa] «երկուսն էլ», षष्ठ[ṣubḥa-] (բարդություններում), հուն. αμφι, լատին. ambo «երկուսն էլ, օճա», ambio, ire «շրջանցել», իտալ. ambito «շրջան», ambiente «միջավայր», լատիշ. abi, ap «շուրջ», լիտվ. abejii «երկուսն էլ», իսլանդ. um «շուրջ, մոտ», շվեդ. om «շուրջ», ռուս. օճա, օճ — — հայ. *ամբողջ*, 3. սանս. वञ्च[vaṣ] «տենչալ, ցանկանալ», वाञ्छ[vañch] «ուզել», անգլ. wish, գերման. wünschen - հայ. *ուզել*. »:

3. b(p,v,w,f) > m հերթագայություն

ֆինն. lumi, էստոն. lumi, հունգար. lom. կարել. луми, կոմի. лым, ուղմուրտ. лымы, մար. лум, մորդվին. лов «ծյուն» - հայ. *եղեամբ*:

ֆինն. iammii «կաղնի», մորդվին. тум, тумо, մար. тумо, կոմի-գիրյան. тым, ուղմուրտ. тыпы.

հունգար. nyelv, խանտ. nalem, մանս. neelem «լեզու»:

մար. vece «մյուս», հունգար. mas «մյուս, այլ» - հայ. *միւս*.

ֆինն. maasto «տեղ, վայր», էրզյան. мастор «աշխարհ, երկիր, պետություն», մոկշան. васта «տեղ» - հայ. *ոստան*:

կոմի вез «մազ», մար. меж «բուրդ» - հայ. *մազ*:

մար. муро «երգ», ֆինն. mure «բարբառ», մոկշան. морсемс «երգել», мярьгомс «ասել», морафтомс «կարդալ» - հայ. *բառ*:

մար. мучаш «վերջ», поч «պոչ», կոմի бож «պոչ» - հայ. *պոչ*:

ֆինն. hamppu «կանեփ», մար. кыне, մորդվին. каньф, ուղմուրտ. кенем - հայ. *կանեփ*, այլ հ.-ե. լեզուներում պարս. kanab, kana, օսերեն гап, սողիկերեն kynb, ռուս. конопля, գերմ. Hanb, լատին. cannabis, հուն. канναβις:

Այս լծորդությունը խիստ բնորոշ է ալթայան լեզվաընտանիքի լեզուներին, որտեղ այն կարող է հանդիպել անգամ միևնույն բառի հարացույցի ձևերի մեջ: Օրինակ թուրք. ben - ադրբ. mān «ես», թուրք. bin - ադրբ. min «հազար», թուրքմեն. bu «այս» (սեռ.հ. munen, տր.հ. muna , ներգ. munda. բաց. mundan):³

B(p,v,f) > m հերթագայությունը խորթ չէ նաև հնդեվրոպական լեզուներին: Օրինակ՝ 1. լատին. nomen, գերմ. Name, շվեդ. namn, դան. navn, հ.իսլանդ. nafn - հայ. *անուն*, 2. անգլ. even «հավասար, համաչափ», իսլանդ. jafn «հավասար,

³ Այս հերթագայությանը կարելի է հանդիպել նաև հայերենի բարբառներում, օրինակ՝ հայ. *ածուխ* - բրբ. *անծող*. *մեք* - *մենք*, *մեծ* - *մենծ* և այլն:

³ Սեմադյան Հ. «Լիակատար քերականություն հայոց լեզվի», հ.VI, էջ 418:

միանման», շվեդ. jāmno «հավասար, հարթ», նորվեգ. jevn, բրբռ. jāmno «հարթ, հավասար» - հայ. *հավասար* (= *համ-*, *ամեն*), 3. լատին. medius, իտալ. mezzo, սանս. madya, գերմ. Mitte, անգլ. mid-/ middle, ռուս. между, լատիշ. videjs «միջին», լիտվ. vidus «մեջտեղ» - հայ. *մէջ*, 4. իռլանդերեն ben «կին» - mna «կնոջ», 5. հայ. *մեծ* - բրբռ. *վենծ*:

Վերոբերյալ օրինակներից երևում է, որ այս լծորդությունը կարող է հնարավորություն տալ հայտնաբերելու որոշ հայերեն – ֆիննաուգրական զուգահեռներ՝ ֆիններեն kääme – հայերեն *քարք*, հունգար. más «մյուս, այլ», մար. vese «մյուս» - հայ. *միւս*, էրզյան. веёке, մոկշյան. фкя – հայ. *մեկ*, մար. жап «ժամանակ» - հայ. *ժամ*, մար. меж «բուրդ», կոմի vez «մազ» - հայ. *մազ*, մար. мучаш «վերջ», поч «պոչ», կոմի бож «պոչ» - հայ. *պոչ*։

Ընդհանուր առմամբ, հայերենի և ֆիննաուգրական լեզուների համեմատությունը բացահայտում է շրթնային բաղաձայնների բազմապիսի լծորդություններ, որն առանձին քննարկման նյութ է։ Միայն մշեմք, որ հայերենի *փ*-ն և *վ*-ն հունգարերենում հաճախ փոխարինվում են արտահայտված, քանի որ հունգարերենը, ըստ Պ.Յայդուի, ֆիննաուգրական միակ լեզուն է, որը պատմական հնչյունափոխության հետևանքով ձեռք է բերել այդ հնչյունը⁴:

$p^h > f$			$v > f$		
հայերեն	հունգարերեն		հայերեն	հունգարեր	
<i>փոք</i>	fujni	«փչել»	<i>վառ</i>	են	«վառվել»
<i>փոր-</i>	furni	«փորել»	<i>վառ</i>	fülni	«եռալ»
<i>փոր-իչ</i>	fűresz	«սղոց»	<i>վառ</i>	forrni	«տաք»
<i>փոք-ր</i>	fogyini	«փոքրանալ»	<i>վեր</i>	forro	«վեր»*
<i>փոր</i>	faragni	«տաշել»		fel	

4. Ֆիննաուգրական լեզուներում պատմականորեն կատարվել է $l > v$ հնչյունափոխությունը, որը բնորոշ է կոմի լեզվին, և որի հիման վրա լեզուն բաժանվում է մի քանի բարբառի^{5, 6}: Օրինակ՝

կոմի пив, նորդվին. пель, ֆինն. piilvi, հունգար. felhő, սամ. bál'va «ամպ»:

կոմի-յազվին. тэл «ձմեռ», կոմի-գիրյան. төв, ուղմուրտ. тол, հունգար. tel:

կոմի-յազվին. н'өл «նետ», կոմի-գիրյան. н'өв, ուղմուրտ. н'өл, նորդվին.

нал, ֆինն. nuoli, հունգար. nyil:

⁴ Хайду П. Уральские языки и народы, М., 1985, с. 268:

* Ուտառով սկսվող բազմաթիվ հայերեն բառերի զուգահեռները նույնպես հունգարերենում սկսվում են ֆ հնչյունով, որը մեկ անգամ ևս ապացուցում է, որ հին հայերենում բառասկզբի *n* – ն պարզ օ չի հնչել, այլ vo(wo): Օրինակ՝ հայ. *որմն* – հունգար. fal «պատ», հայ. *ոթ* – հունգար. fázni սառչել», հայ. *ործ* – հունգար. ferj «ամուսին»:

⁵ Хайду П. Уральские языки и народы, М. 1985, с. 59:

⁶ Лыткин В.И. Историческая грамматика коми языка, Сыктывкар, 1957, с. 119:

կոմի тыв, ուղմուրտ. тылы «փետուր», մանս. таул, тоол, туул, հոլնգար. toll, սաամ. долге, толке:

կոմի сюв, сюл «աղի», ուղմուրտ. сюл, ֆինն. մար. шол, шолы, մորդվին. сюло, сюла, սաամ. чоаллэ:

Վ. Լիտկինը գտնում է, որ 1 – ն նախնական է, իսկ 1 – v անցումը կատարվել է 16-րդ դարից ոչ ավելի վաղ⁷:

Կոմի լեզվի кувны «մեռնել», овны «լինել», сывны «հալվել» և մի շարք այլ բառեր ունեն համարժեքներ հայերենում և այլ հնդեվրոպական լեզուներում, որոնք կարելի է գտնել միայն 1 – v լծորդությունը հաշվի առնելու դեպքում: Օրինակ՝ կոմի кувны «մեռնել», кулӧм «մահ», ֆինն. kuolla «մեռնել», kalma, kuolo, kuolema «մահ», հոլնգար. halmi «մեռնել», halai «մահ», ուղմուրտ. кулыны «մեռնել», кулон «մահ», մարիերեն колаш «մեռնել», էրզյաներեն, մոկշաներեն куломс «մեռնել» - հայ. եղեռն՝ և նրա համարժեքները այլ հնդեվրոպական լեզուներում՝ անգլ. kill (<հ. անգլ. cwellan), իսլանդ. hel «մահ»:

կոմի овны [ол-], овлыны «ապրել, լինել», олӧм «կյանք», олысь «բնակիչ», ուղմուրտ. улыны «ապրել», հոլնգար. elni «ապրել», ֆինն. olla «լինել», eläa «ապրել», էստոն. olema «լինել» - հայ. եղ-:

կոմի кев [кел-] «հարս, տալ», ֆինն. käly «հարս, տալ, քենի», մորդվին. кел - օսերեն хо/ хwætæ, պարս. xahār, աֆղան. xog, բոլորը «քույր» նշանակությամբ, նաև վրացերեն ქალი[բալի] «աղջիկ» և հայերեն քույր՝ հակառակ ընդունված հ.-ե. նախածնի:

կոմի кыв [кыл-] «լեզու», ուղմուրտ. кыл, ֆինն. kieli, էրզյա-մոկշա кель, էստոն. keel «լեզու», լատին. gl̥ūtus, ī «կոկորդ», gl̥ūtio, īre «կուլ տալ», իտալ. collo «վիզ», օսերեն gælæx «ծայն, կոկորդ», հինդի गिलना[gilnā] «կուլ տալ», հուն. γλωσσα, ρου. глотка, глотать - հայ. կուլ: (Լատիներեն lingua, հայերեն լեզու բառերը, կարծում ենք, այս արմատի հնագույն համարժեքները չեն կարող համարվել, քանի որ դրանցում բառասկզբի հետնալեզվային պայթականը կորած է):

կոմի сыв «հալված», сывны «հալվել», сылӧм «հալում» - հայ. ծոլլ, լատին. solvere, solutio, onis, հինդի सुलझाना[suljānā] «քանդել, արծակել, լուծել»⁸:

⁷ Лыткин В.И. Коми — язвинский диалект, М., 1961, с. 36 — 37:

⁸ Ըստ Զ. Աճառյանի ԶՍԲ-ի համարվում է չստուգաբանված բառ:

⁹ Համաձայն պամեդական ստուգաբանության կապվում է հայերեն հալ. արմատի հետ: Սակայն հայերեն հալ, հալ-ուել/ հալվել արմատն իր հերթին այլ զուգահեռներ ունի ֆիննաուգրական և հնդեվրոպական լեզուներում՝ հոլնգար. oldani «հալել, լուծել», olvadni «հալվել», ֆինն. halvetäa «ցրվել, անհետանալ», կոմի улявны «հալվել», հինդի गलना[galnā] «հալվել, լուծվել, плавиться», गलाना [galānā] «հալեցնել, լուծել»:

Լ ծայնորդի շրթնայնացման երևույթին հանդիպում ենք հոլանդերենում անգլ. gold – հոլ. goud «ոսկի», անգլ. old – հոլ. oud «ծեր», անգլ. cold – հոլ. koude. «ցուրտ», անգլ. hold – հոլ. houden «պահել», որտեղ արմատի / բաղաձայնը նախնական է, ինչպես նաև անգլերեն մի քանի բառերում, ուր բաղաձայնին նախորդող կոշտ /-ն արտասանվում է *u*, սակայն գրության հին ձևը պահպանվում է՝ folk [fouk] «ժողովուրդ», volk [jouk] «դեղնուց», holm [houm] «կղզյակ»:

Լ > v անցումը որոշակիորեն երևում է ուկրաիներենում՝ ռուսերենի հետ համեմատելիս: Յնդեվրոպական այլ լեզուներից և մասնավորապես մյուս սլավոնական լեզուներից վերցված օրինակներն ապացուցում են, որ նախնական է Լ ծայնորդը, օրինակ՝ ուկր. мова «լեզու» - , ռուս. мол – ить, мол – ва, ուկր. ковка – ռուս. колок, ուկր. вівна – ռուս. вѣна «ոչխարի բուրդ», լեհ. wélna, չեխ. vlna, լիտվ. vilna, ուկր. вовк – ռուս. волк, հին ռուս. вѣакъ, լեհ. wilk, լիտվ. vilkas, ուկր. бовтати – ռուս. болтать, հինդի बोलना [bolnā] «խոսել», իտալ. balbettare «մրթմրթալ»:

Ակնհայտ է, որ սովորաբար շրթնայնանում է բառավերջում կամ բաղաձայնից առաջ գտնվող կոշտ հնչող Լ – ն: Կոմի լեզվում Լ – ն ծայնավորից առաջ վերականգնվում է՝ выв «նակերևույթ» - вылѡ «վրա», йыв «զագաթ, կատար» - йылѡ, йылын «վրա», кувны «մեռնել» - кулѡм «մահ», овны «ապրել» - олѡм «կյանք»:

5. Ֆիննաուգրական լեզուներում առկա է *r* > *š*/*ž* լծորդությունը:

Իրլան. маштомс «սպանել» (*կատար. կ.*), машнемс «սպանել, ոչնչացնել» (*անկատ. կ.*), маштозь «սպանված», маштома «սպանություն», մոկշան. машфнемс «սպանել» (*անկատ.*), машфтомс «սպանել» (*կատ.*), ֆինն. murtaa «կտրել, ջարդել», murha «սպանություն», murhata «սպանել» - հայ. մեռ-:

կոմի гижны «գրել», гижта «գիծ», кырым «ստորագրություն», киритны «վրան գիծ քաշել», ուդմուրտ. гож «գիծ», гожъяны «գրել», ֆինն. kirja «գիրք» - հայ. գիր:

կոմի гыжъявны «քերծել», հունգար. kartolni «քորել», karcolni «քերծել», ֆինն. karsia «կտրատել (ճյուղերը)», karstata «քորել», էստոն. keere «կտրվածք» - հայ. քեր-:

կոմի ыж «ոչխար», մոկշան. уча «ոչխար», մար. ыжга «մուշտակ», էստոն. jäär «ոչխար» - հայ. առն:

կոմի кежны «թեթել», ուդմուրտ. кожаны «շեղվել ճանապարհից», հունգար. kő «շրջան, շուրջ», köriv «աղեղ», ֆինն. kera «կծիկ, գունդ», karsas «շեղ», kiero «ծուռ, թեք», էստոն. keerama «շրջել», kaar «աղեղ, կամար», kera «գունդ» - հայ. կեռ/կոր:

կոմի гор «հնգծ: վառարան, օջախ», гож «արև /բառակապակց./», гожом «ամառ», ուղմուրտ. гур «վառարան», гужем «ամառ», нолу. гореть, էրգյան. кирвасм «վառվել, пылать», тустонн. kiir «ծառագայթ», kirgas «վառ, պայծառ» - հայ. կրակ:

մար. ныж «նիրհ», ныж лияш «նիրհել, (բառացի՝ նիրհ լինել)», нераш, нералташ «ննջել», ուղմուրտ. нырулыны «ննջել», нырулон «նինջ», - հայ. նիրհ:

Որոշ դեպքերում ուգրաֆիննական $\$ / \tilde{z}$ -ին համապատասխանում է հայերեն $\tilde{z}$ -ն կամ η -ն, որ պարզ վկայությունն է հնագույն l/r լծորդության կոմի кижа, ֆինն. halla «սառնամանիք» - հայ. եղեամն, մոկշա. ежадомс «մոտենալ» - հայ. յար - , էրգյաներեն яжамс «աղալ», մոկշաներեն яжамс «ջարդել», яжавомс «աղալ» - հայ. աղալ:

Թերևս, հայերեն մեղ-ք բառը կարելի է կապել կոմի мыж «մեղք», мыжавны «մեղադրել» բառերի հետ, ինչպես նաև ուղմուրտերեն ежаны/ ежманы «գոյանալ, առաջանալ» բառը հայերեն եղ- արմատի հետ:

$R > \$ / \tilde{z}$ հնչյունափոխությունը հատուկ է նաև հայերենի բարբառներին (Զամշեն, Զածըն, Նոր Նախիջևան)

Զամշեն	Նոր Նախիջևան	Զածըն
երթալ>էշտուշ	մորթել>մօշտուշ	երթալ>իշտուլ
կարդալ>գաշտուշ	մարդ>մաշտ	երեք>ժիեք
երդումն>էշթվօնք	հորթ>հօշտ	իրենք>ժենք

Չարմանալի սմանություն ենք գտնում մարիերեն улаш/ылаш «լինել» և Զամշենի բարբառի ըլլուշ «լինել» բառերի միջև:

6. Ֆիննաուգրական լեզուներում ակնբախ է $k > n$ լծորդությունը: Պետք է ենթադրել, որ նախնական է հետմալեզվային պայթականը, հնչյունափոխության շղթան կարող էր անցնել $k > k' > n' (> n)$ փուլերը:

էրգյան. налкомс «խաղ», մոկշան. налхкомс «խաղալ», - հայ. խաղ ($k > x$): հունգար. nyelv - , Խստոն. neel «կոկորդ», ֆինն. kieli , էրգյան. кель «լեզու», մոկշան. кяль- հայ. լեզու (= հուն. γλωσσα):

մար. налаш «վերցնել», էրգյան. нельгемс «խլել», ուղմուրտ. кал «կապ», калтыны «բռնել», կոմի калыч «փական, սողնակ», калычавны «կողպել», калым «կաշառք» - հայ. կալ-/խիլ-:

հունգար. nyelni «խտել», kes «դանակ», ֆինն .keskus «կենտրոն» - հայ. կէս:

կոմի нёрны «թեքվել, ծովել», нёринь «թեքում», հունգար. kőr «շրջան», kerek «կլոր», էրգյան. куро «շրջան», ֆինն. kiero «ծուր», Խստոն. kaar «աղեղ» - հայ. կոր/կեռ:

խտոն. nāare «գեղծ», ուղմուրտ. нѣредъ, - հայ. *գեղծ*, (շվեդ. körtel, լատին. glandula):

խտոն. nārima «կրծել», երգյան. нарамъ «խուզել», керсемс «հատել, կտրել», հունգար. nyírti «խուզել, կտրել», մար. кыраш «պատռել» - հայ. կուրտ և քազմաթիվ զորգահեռներ հ.-ե. լեզուներում:

հունգար. nyelini, երգյան. нилемъ «կուլ տալ», մար. нелаш, ֆինն. niella. kulautta «կուլ տալ», կոմի нилан - հայ. *կուլ*:

հունգար. nyar «ամառ», ֆինն. narastys «այրուցք», կոմի нярмунны «բռնկվել», երգյան. кирвамъ «վառվել» - հայ. *կրակ*:

Այսպիսով, վերոբերյալ հնչյունական համապատասխանությունները հնարավորություն են ընծեռում հայտնաբերելու հայ-ֆիննաուգրական նոր զուգաբանություններ: Դրանք հեռանկարային են թվում նաև հնդեվրոպական և ֆիննաուգրական լեզվական առնչությունների քննության առումով: Ֆիննաուգրական լեզուներում առկա հնչյունական անցումների քննությունը կարող է ծառայել որպես տիպաբանական նյութ՝ հնդեվրոպական լեզուների համեմատական ուսումնասիրության համար:

Բերենք մի քանի օրինակ. ռուս. шар, լիտվ. ženg «քայլ» ($n > \emptyset$), 1. երգյան. нуртнемъ «լցնել», нуръгемъ «ծորալ, կաթել», մար. нѣрташ «թրջել», կոմի кырѡдъ «բրբ. ջրանցք, առու», սանս. घर[*g^har*]«թրջել, ջուր ցանել», օսերեն qaryn:qard «ներս ծծվել, հոսել, թափանցել», իտալ. correre «վազել, հոսել», corrente «հոսանք». 2. հունգար. nyestni «էտել», кѣс «ղանակ», հայ. *կէս*, ռուս. нож, 3. երգյան. налкѡмъ «խաղ», մոկշան. налхкомъ «խաղալ», հինդի खेला[*k^helā*] «խաղալ» ($k > n$), 1.կոմի гыжъявны, հունգար. karcolni «քերծել», kartolni «քորել», օսերեն xæryn: xord, xwærun: xwærd «քորվել», 2. կոմի ыж «ոչխար», լատին. ariēs, հայ. *առն* ($r > \dot{z}$):

Թերևս, հայերեն *ոստան* արմատի զուգահեռը կարող է համարվել ոչ միայն ֆիններեն maasto, մոկշաներեն васта, սանսկրիտ वस्तु [*vastu*] «տեղ, հողակտոր», वास्तु [*vāstu*] «տեղ, տուն, սենյակ» (արմատն է՝ սանս. वस [*vas*] «ապրել, բնակվել, գիշերել»), գերմաներեն Wesen «գոյություն, էակ», Anwesen «ղաստակերտ», օսերեն bæstæ «երկիր, աշխարհ, տեղ» բառերը, այլև ռուսերեն место բառը: Հայերեն *մերկ* բառի զուգահեռները կարող են համարվել՝ անգլերեն bare, իսլանդերեն ber, նորվեգերեն bare բառերը, նույն կերպ՝ լատին. mos, moris - հայ. *բար-ք* ($b/v > m$):